

CONCOURS D'ENTREE 2022-2023/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԴՅՈՒՅԹ 2022-2023

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

23/06/2022

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե

Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)

1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Առաջադրանք 2. (7 միավոր)

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 3. (8 միավոր)

3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Առաջադրանք 4. (8 միավոր)

4.1., 4.2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 5. (6 միավոր)

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր):

Դավիթի ընտանիքը մեծ չէր. ամուսիններն էին, տղան ու աղջիկը: Հայրը տղային ու աղջկան տնային կրթություն էր տալիս՝ սկսած երաժշտությունից մինչև գիմնազիական դասընթացը: Ֆրանսիացի դաստիարակչուհին էլ առանձին էր կրթում երեխաներին: Մի անգամ նույնիսկ փորձեց, որ նրանք հայերեն դասեր էլ առնեն, և դրա համար հրավիրեց հայերենի մի ուսուցչի, բայց զավակները հենց սկզբից բացեիքաց հրաժարվեցին՝ ասելով, որ հայերենը շատ դժվար լեզու է. չէ՞ որ տան մեջ նրանց գործածական լեզուները ռուսերենն ու ֆրանսերենն էին:

Աղջիկը բավական տգեղ արարած էր՝ հոր պես սփռթնած և, ըստ երևույթին, հիվանդոտ. բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան: Ծնողների առանձին հոգածության տակ էր նրա լսելիքը. եթե պատահում էր, որ փողոցային որևէ թափառական երաժիշտ իր կիթառով կամ հարմոնով մտնում էր տան բակը՝ երգասացությամբ մի քանի կոպեկ հավաքելու, իսկույն ծառաների միջոցով դուրս էին քշում նրան(՝) աղջկա երաժշտական լսելիքը չփչացնելու համար: Տղան՝ մի շատ գեղեցիկ ու աշխույժ պատանի, բոլորովին նման չէր ո՛չ հորը և ո՛չ մորը և երևի այդ պատճառով նրանց առանձին սիրո և գուրգուրանքի առարկան էր: Նրան շատ էին երես տվել, և նա տան մեջ իրեն շատ ազատ էր պահում՝ նյարդայնացնելով տան սպասավորներին:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (1 միավոր):

- 1) ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
- 2) ԱՇՏԱՐԱԿԻ ՁՈՐ, ԿՈՒՐԻՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՌՈՒԲԻՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ
- 3) ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
- 4) ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳԱՎԱՌ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՁԵՆՈՎ ՕՉԱՆ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

- 1) պետ (ավտոտեսուչ), կահ (կարասի), նիստ (ու) կաց, գլուխ (գլխի), քաջ (արի)
- 2) գլուխ(կոնծի), կուժ (կոտրուկ), ռազմա(ծովային), առ (կախ), ըստ(ամենայնի)
- 3) օդ(ուղի), հարավ (ամերիկյան), մեծ (բրիտանական), դառն (աղի), տեղն (ու)տեղը**
- 4) միայն(թե), նյու (յորքցի), ի(զուր), մեն (միակ), բուժ (հաստատություն)

2 . Առաջադրանք 2 (7 միավոր)

2.1. Տրված շարքերից մեկական նախածանց, արմատ և վերջածանց ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց համաձայնցավոր բառ (3 միավոր):

Ընդ	կանոն	յա	ընդգետնյա
ան	ստուգայց	ում	անդառնալի
վեր	գետնատարած	ություն	վերստուգիչ
տար	դյուրընթեռնելի	ելի	տարընթերցում
առ	գլխարկ	ալի	առարկելի
պար(ա)	դարձդարձիկ	իչ	պարականոնություն

2.2. Ընդգծել հոդակապ ունեցող բառերը (4 միավոր):

Կնատյաց, **դարավանդ, որդեգիր,** գառիվեր, **քաջապետ,** շաքարավազ, բացեիբաց, **բարեբանել,** խնկարկում, տարեցտարի, **տարակարծիք,** հնավանդ, **անթացույ,** փայտածուխ, **հերոսաբար,** այրուձի, **տարեգիր,** զարմանալի:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Նզովք, խորշակ, Նավասարդ, նշավակ, պախուրց, գավազան, թիրախ, առասան, բանադրանք, գայիսոն, Ամանոր, սամում:

- նզովք-բանադրանք**
- խորշակ-սամում**
- Նավասարդ-Ամանոր**
- նշավակ-թիրախ**
- պախուրց-առասան**
- գավազան-գայիսոն**

3.2. Ընտրել և գրել հակահիշների վեց գույգ (3 միավոր):

Գծուծ, որկրամուլ, անհարթ, գետնամած, գեղատեսիլ, կամային, երկնասլաց, քչակեր, անհրապույր, շոայլ, թուլամորթ, ողորկ:

- գծուծ-շոայլ**
- որկրամուլ-քչակեր**
- անհարթ-ողորկ**
- գետնամած-երկնասլաց**
- գեղատեսիլ-անհրապույր**
- կամային-թուլամորթ**

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

- ա) վերջին շապիկը ծախել- սնանկանալ, սիրտը մաշել- տանջել, ուղտի համառություն- համբերություն
- բ) փակագծերը բացել- ի հայտ բերել, ցանցը զցել- խաբել, քար կտրել- ապշել
- գ) տեղը դնել- զիջել, ուսերին նստել- իրեն ենթարկել, փոշի դառնալ- ոչնչանալ**
- դ) օձիքը բռնել- պահանջել, սև կատու- գժտություն, հինգ մատի նման- լիովին
- ե) վզին կապել- պարտադրել, քրտինք թափել- հոգնել, սուր ճոճել- հոխորտալ**
- զ) հետ կանգնել- ընկրկել, թեթև սրտով- հանգիստ, լեզուն կարճ- անհամարձակ

Առաջադրանք 4 (8 միավոր)

4.1 Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):

- ա) Հետախույզը գործընկերների հետ (**քննարկեց**, քննեց) հանցագործության կատարման բոլոր հնարավոր տարբերակները:
- բ) Սպասուհին սեղանին էր շարում ոսկեգոծ (ստահակները, **սկահակները**) և հիանում դրանց փայլով:
- գ) Հայրենասիրական բանաստեղծության երրորդ (քառյակը, **քառաստողը**) արտահայտում է ստեղծագործության հիմնական ասելիքը:
- դ) Հողագործին տոթից չէր փրկում անգամ գլխարկի լայն (**հովհարը**, հովարը):

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Ազգային մեծությունների հետ առնչվելու համար **մենք՝** սովորական մահկանացուներս, **պետք է բարձրանանք**¹՝ հայացքներս **հառելով (հառած)** վեր՝ բերդանման տաճարի գեղաշուք մուտքին:

(ազգային, բարձրանալ, ես, հառել)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Ի շնորհիվ անձնուրացության, **մթնեցնել**, ոչ մեկ, քո հոգսդ, **տեսակետներ**, չափաձողներ, **այս կերպ**, վանկանիշեր, **ըստ որում**, ձեզ մոտից, խոնավեցնել, ամենախստագույնս, **ըստ արժանվույն**, ուսակապներ, **ձեզ պես**, հանգչած, **չարանենգներ**, **ֆիդայիներ**:

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Աթոռներ շինելիս նա հիշում էր հայրենի անտառների կաղնեփայտը, և սիրտը կծկվում էր կարոտից:

բ) Փոքրիկը վախենում էր մութ սենյակ մտնելուց և աղերսում էր մորն ուղեկցել իրեն:

գ) Խորհում էր, որ ոչ ոք ընդունակ չէ իր վրա այնպիսի տպավորություն գործելու, ինչպես այդ մոռացված թատրոնի ծերացած դերասանը:

դ) Ամեն անգամ, երբ ես բռնում էի նրա ձեռքը, նա դադարում էր նյարդայնանալուց:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Որքան փոթորիկը սաստկանում էր, այնքան ահն ու անորոշությունը պատում էին մարդկանց:

բ) Ամեն ոք կյանքին նայում էին այլ հայեցակետից և եզրակացություններ անում:

գ) Ամենքը պետք է մտածեն բնությունը չաղտոտելու մասին:

դ) Երբ երեխաները ուսուցչի հետ վերադարձան սարից, վանքի բակում մոմերն արդեն հանգել էին:

¹ Մի շարք ժամանակաձևերի կիրառությունը ընդունելի է:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Չնայած գեղանկարիչ չլինելուն՝ Վիլյամ Սարոյանն իր հոտատությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

ա) Թեև Վիլյամ Սարոյանը գեղանկարիչ չէր, իր հոտատությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

բ) Թեև գեղանկարիչ չէր, Վիլյամ Սարոյանն իր հոտատությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

գ) Չլինելով գեղանկարիչ՝ Վիլյամ Սարոյանը հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները, քանի որ ուներ նուրբ ճաշակ ու հոտատություն:

դ) Եթե գեղանկարիչ էլ չէր, Վիլյամ Սարոյանն իր հոտատությամբ ու նուրբ ճաշակով հիանալի ընկալում էր աշխարհի բազմազան գույները:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Նա գղջաց և ասաց.

– Հա՛յր, մեղանչեցի քո դեմ, ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, պետք չէ, որ քո անբասիր անվան կողքին հնչի իմը:

ա) Նա գղջաց և ասաց հորը, որ նա մեղանչեց իր դեմ, ինքը այլևս արժանի չէ նրա որդին կոչվելու, պետք չէ, որ նրա անբասիր անվան կողքին հնչի իրենը:

բ) Նա գղջաց և ասաց հորը, որ ինքը մեղանչեց նրա դեմ, ինքը այլևս արժանի չէ նրա որդին կոչվելու, պետք չէ, որ նրա անբասիր անվան կողքին հնչի իրենը:

գ) Նա գղջաց և ասաց հորը, որ նա մեղանչեց իր դեմ, նա այլևս արժանի չէ իր որդին կոչվելու, պետք չէ, որ իր անբասիր անվան կողքին հնչի նրանը:

դ) Նա գղջաց և ասաց հորը, որ ինքը մեղանչեց նրա դեմ, ինքը այլևս արժանի չէ նրա որդին կոչվելու, պետք չէ, որ նրա անբասիր անվան կողքին հնչի նրանը: